ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 06.05.2022թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ԳԲՔԱ-LO-2022/71

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Ռ. Մկրտչյանի

Պատվիրատու՝ «Երևան քաղաքի պատմության թանգարան» ՀՈԱԿ
Բողոք բերող՝ «Ջանիկ Սևոյան» Ա/Ձ

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ԵՔՊԹ-ԳՀԾՁԲ-22/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, Լուսանկարների և փաստաթղթերի թվայնացման և համակարգի ներդրման ծառայությունների ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ նաև՝ Բողոքներ քննող անձ), քննության առնելով «Ջանիկ Սևոյան» Ա/Ձ-ի (այսուհետ նաև՝ Մասնակից) կողմից 19.04.2022թ.-ին ներկայացրած բողոքը (այսուհետ նաև՝ Բողոք) և կից փաստաթղթերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. **<u>Գործի նախապատմությունը.</u>**

Դիմելով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ Մասնակիցը ներկայացրած բողոքով խնդրել է՝ «ԵՔՊԹ-ԳՀԾՁԲ-22/1» ծածկագրով Ընթացակարգի հանձնաժողովին պարտավորեցնել մերժելու «Բեստկոդ» ՍՊԸ-ի հայտը՝ չեղարկելով «Բեստկոդ» ՍՊԸ-ի հետ պայմանագիր կնքելու որոշումը:

Բողոքներ քննող անձին բողոքը մակագրվել է 19.04.2022թ.-ին:

20.04.2022թ.-ին www.gnumner.am կայքում հրապարակված հայտարարությամբ բողոքը ընդունվել է վարույթ և տրվել է թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2022/71 համարի ծածկագիրը:

28.04.2022թ.-ին և 06.05.2022թ.-ին նշանակվել և հրավիրվել են նիստեր:

Գործի քննությունն ավարտվել է 28.04.2022թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 06.05.2022թ.-ին:

2. «Ջանիկ Սևոյան» Ա/Ձ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.

«Ջանիկ Սևոյան» Ա/Ձ-ն 19.04.2022թ.-ին ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

«2022 թվականի ապրիլի 14-ին, հրապարակվել է «Երևան քաղաքի պատմության թանգարան» ՀՈԱԿ-ի, «ԵՔՊԹ-ԳՀԾՁԲ-22/1» ծածկագրով Ընթացակարգի թիվ 4 Արձանագրությունը (տե՛ս Արձանագրություն 4) և պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը: Համաձայն «Գնումների մասին» օրենքի 10-րդ հոդվածի 1-ին կետի սահմանվել է անգործության ժամկետ 5 օրացուցային օր:

1. 08.04.2022թ., ժամը 15:00-ին, տեղի է ունեցել «ԵՔՊԹ-ԳՀԾՁԲ-22/1» ծածկագրով Ընթացակարգի հայտերի բացումը:

2. Ընթացակարգին մասնակցել են երկու կազմակերպություն՝ «Անհատ ձեռնարկատեր Ջանիկ Սևոյան»-ը և «Բեստկոդ» ՍՊԸ-ն:

3. 08.04.2022թ., ժամը 15:00-ին «Բեստկոդ» ՍՊԸ-ն գնային առաջարկը ներկայացրել է, որպես ԱԱՀ վճարող:

4. Հայտերի բացման պահին, 08.04.2022թ., ժամը 15:00-ին, «Բեստկոդ» ՍՊԸ-ն, Պետական եկամուտների կոմիտեի կայքում հաշվառված է եղել, որպես «ժամանակավոր դադարեցված» կազմակերպություն, այսպիսով՝ չլինելով որևէ «հարկատեսակի գծով»՝ պարտավորություն ունեցող կազմակերպություն, հետևաբար չի հանդիսացել ԱԱՀ վճարող:

Փաստն արձանագրվել նույն օրը՝ ՊԵԿ-ի պաշտոնական կայքում «Բեստկոդ» ՍՊԸ-ի առկա տվյալներով,

5. Փաստերը 08.04.22թ.-ին և 11.04.22թ.-ին գրավոր ներկայացվել է հանձնաժողովին (տե՛ս գրություն 1 և գրություն 2):

6. Ապրիլի 12-ի (տե՛ս Արձանագրություն 3) նիստում, հանձնաժողովը հիմք ընդունելով մեր կողմից ներկայացված փաստերը, «Բեստկոդ» ՍՊԸ-ից պահանջել է փաստաթղթեր ԱԱՀ համարվելու վերաբերյալ, ապա ապրիլի 14-ի արձանագրության (տե՛ս Արձանագրություն 4) հրապարակմամբ, ի գիտություն ընդունել, որ «Բեստկոդ» ՍՊԸ-ի կողմից ներկայացվել են անհրաժեշտ փաստաթղթերը, ապա նույն արձանագրությամբ, որոշում ընդունել անգործության ժամկետի լրանալուց հետո Պայմանագիր կնքել «Բեստկոդ» ՍՊԸ-ի հետ:

7. 15.04.2022թ.-ին, ժամը 13:39-ին, գրությամբ (տե՛ս Գրություն 4), «Անհատ ձեռնարկատեր Ջանիկ Սևոյան»-ը հանձնաժողովին խնդրել է տրամադրել «Բեստկոդ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերը, ինչը տրամադրվել է 18.04.2022թ.-ին, ժամը 21:33:

8. Համաձայն հանձնաժողովի կողմից տրամադրված փաստաթղթերի (տե՛ս Փաստաթղթեր 1-ը), «Բեստկոդ» ՍՊԸ-ն «ԱԱՀ վճարող համարվելու և որպես ԱԱՀ վճարող հաշվառվելու վերաբերյալ» հայտարարություն ներկայացրել է 11.04.2022-ին, ժամը 12:19:24-ին, ինչը փաստում է, որ «Բեստկոդ» ՍՊԸ-ն հայտերի ներկայացման պահին, 08.04.2022-ին, ժամը 15:00-ին չի հանդիսացել ԱԱՀ վճարող:

9. Համաձայն նույն փաստաթղթերի «Ավելացված արժեքի հարկի վճարող համարվելու և որպես ավելացված արժեքի հարկի վճարող հաշվառվելու վերաբերյալ» Հայտարարության 1-ին կետով հստակ նշված է, որ «Բեստկոդ» ՍՊԸ-ն համարվում է ԱԱՀ վճարող 11.04.2022թ.-ից մինչև 2022 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ, ինչը ևս մեկ անգամ փաստում է, որ «Բեստկոդ» ՍՊԸ-ն 08.04.2022թ.-ի ժամը 15:00-ն, չի հանդիսացել ԱԱՀ վճարող:

10. Համաձայն նույն փաստաթղթերի «Բեստկոդ» ՍՊԸ-ն ՊԵԿ-ին ուղղված դիմումով, հստակ նշել է, որ «Բեստկոդ» ՍՊԸ-ն իր գործունեությունը վերսկսել է 11.04.2022թ.-ից և ուղարկել ԱԱՀ վճարող համարվելու վերաբերյալ հայտարարություն: Վերջինս փաստում է, որ «Բեստկոդ» ՍՊԸ-ն 08.04.2022թ.-ի ժամը 15:00-ն, չի ունեցել «գործող» կարգավիճակ և չի հանդիսացել ԱԱՀ վճարող:

11. Համաձայն ՊԵԿ պատասխան նամակի, հստակ նշված է, որ «Բեստկոդ» ՍՊԸ-ն «գործող» կարգավիճակ է ստացել 11.04.2022 թվականից և 2022 թ. ապրիլի 11-ից մինչ 2022թ. դեկտեմբերի 31-ն ընդգրկված է ԱԱՀ վճարողներից ցանկում: Վերջինս փաստում է, որ «Բեստկոդ» ՍՊԸ-ն 08.04.2022թ.-ի ժամը 15:00-ն, չի ունեցել «գործող» կարգավիճակ և չի հանդիսացել ԱԱՀ վճարող:

12. Փաստացի պետք է արձանագրել, որ Ընթացակարգի հայտերի բացման պահին 08.04.22թ., ժամը 15:00-ին «Բեստկոդ» ՍՊԸ-ն եղել է «Ժամանակավոր դադարեցված» և չի հանդիսացել ԱԱՀ վճարող: Միայն հայտերի բացման պահից հետո, 11.04.22թ.-ին «Բեստկոդ» ՍՊԸ-ն իր կարգավիճակը փոխարինել է «Գործող»-ով և հետո միայն հայտարարվել ԱԱՀ վճարող:

13. Վերոնշյալը փաստում է, որ «Բեստկոդ» ՍՊԸ-ն հայտերի բացման պահից հետո է իրականացրել գործողություններ և իր համար ապահովել ԱԱՀ վճարող համարվելու հանգամանքը:

14. Հաշվի առնելով, որ «Բեստկոդ» ՍՊԸ-ն ապրիլի 8-ին, ժամը 15:00 գնային առաջարկը ներկայացրել է, որպես ԱԱՀ վճարող, սակայն հայտերի բացման պահին (ապրիլի 8, ժամը 15:00) չի հանդիսացել ԱԱՀ վճարող, այդպիսով խախտել է «Գնումների մասին» օրենքի 34-րդ հոդված 3-րդ մասը, ինչպես նաև հրավերով սահմանված ընթացակարգը:»:

Ելնելով վերոգրյալից՝ «Ջանիկ Սևոյան» Ա/Ձ-ն Բողոքներ քննող անձին խնդրել է՝ «ԵՔՊԹ-ԳՀԾՁԲ-22/1» ծածկագրով Ընթացակարգի հանձնաժողովին պարտավորեցնել մերժելու «Բեստկոդ» ՍՊԸ-ի հայտը՝ չեղարկելով «Բեստկոդ» ՍՊԸ-ի հետ պայմանագիր կնքելու որոշումը:

Ի լրումն «Ջանիկ Սևոյան» Ա/Ձ-ի կողմից ներկայացված բողոքի, Մասնակիցը 02.05.2022թ.-ին ներկայացված դիրքորոշմամբ հայտնել է հետևյալը.

«2022 թվականի ապրիլի 29-ին, էլ-փոստով (gbqa_ohanyan@mail.ru) ստացել եմ «Երևան քաղաքի պատմության թանգարան» ՀՈԱԿ-ի, «ԵՔՊԹ-ԳՀԾՁԲ-22/1» ծածկագրով Ընթացակարգի գնումների համակարգողի կողմից ներկայացված դիրքորոշումը:

Հայտնում եմ, որ դիրքորոշման մեջ որևէ նոր հանգամանք ներկայացված չէ: Ավելին, դիրքորոշումը ևս մեկ անգամ ապացուցում է օրենքի և ընթացակարգի խախտումը:

Մեր կողմից ներկայացված բողոքը վերաբերում է հայտերի բացման պահին 08.04.2022թ., ժամը 15:00-ին «Բեստկոդ» ՍՊԸ-ի ունեցած հարկային պարտավորություններին:

Հիմք ընդունելով «Գնումների մասին» օրենքի 34-րդ հոդված 3-րդ մասը, հրավերով սահմանված ընթացակարգը, ինչպես նաև «Բեստկոդ» ՍՊԸ-ի կողմից հետագայում ներկայացված փաստաթղթերը, փաստվում է, որ խախտվել է օրենքն ու ընթացակարգը:

Հրավերի «Գնային առաջարկ» Հավելված 2-ում, ԱԱՀ-ի տողի մասում, հստակ նշված է, որ եթե մասնակիցն ավելացված արժեքի հարկ վճարող է, ապա տվյալ պայմանագրի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարվելիք ավելացված արժեքի հարկի գումարը նշվում է 4-րդ սյունակում:

Մինչդեռ 08.04.2022թ., ժամը 15:00-ին, «Բեստկոդ» ՍՊԸ-ն հայտով սահմանված գնային առաջարկը ներկայացնելիս չի հանդիսացել ԱԱՀ վճարող:

«Բեստկոդ» ՍՊԸ-ի կողմից բերված փաստաթղթերում հստակ նշված և փաստված է, որ ընկերությունը հայտերի բացման պահին չի հանդիսացել ԱԱՀ վճարող: Հայտերի բացումը տեղի է ունեցել 08.04.2022թ., ժամը 15:00-ին, իսկ «Բեստկոդ» ՍՊԸ-ն ԱԱՀ վճարող է դարձել 11.04.2022թ.-ին՝ հայտերի բացումից 3 օր անց:

Հանձնաժողովը իր գնահատումը իրականացնում է հայտերի բացման պահին առկա կարգավիճակով, ոչ թե հետագայում առաջացած հանգամանքներով:

Հաշվի առնելով, որ «Բեստկոդ» ՍՊԸ-ն ապրիլի 8-ին, ժամը 15:00 գնային առաջարկը ներկայացրել է, որպես ԱԱՀ վճարող, սակայն հայտերի բացման պահին (ապրիլի 8, ժամը 15:00) չի հանդիսացել ԱԱՀ վճարող, այդպիսով խախտել է «Գնումների մասին» օրենքի 34-րդ հոդված 3-րդ մասը, ինչպես նաև հրավերով սահմանված ընթացակարգը:

Հիմք ընդունելով վերոնշյալ փաստերը խնդրում ենք «ԵՔՊԹ-ԳՀԾՁԲ-22/1» ծածկագրով Ընթացակարգի հանձնաժողովին պարտավորեցնել մերժելու «Բեստկոդ» ՍՊԸ-ի հայտը՝ չեղարկելով «Բեստկոդ» ՍՊԸ-ի հետ պայմանագիր կնքելու որոշումը:»:

3. <u>«Երևան քաղաքի պատմության թանգարան» ՀՈԱԿ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստարկները, հիմնավորումները և դիրքորոշումը.</u>

Բողոքներ քննող անձը 20.04.2022թ.-ին թիվ /ԲՔԱ-ԼՕ/2/6912-2022 գրությամբ դիմել է «Երևան քաղաքի պատմության թանգարան» ՀՈԱԿ-ին (այսուհետ նաև՝ Պատվիրատու), հնարավորություն տալով «Ջանիկ Սևոյան» Ա/Ձ-ի կողմից 19.04.2022թ.-ին ներկայացված բողոքի վերաբերյալ ներկայացնել անհրաժեշտ բոլոր փաստաթղթերի պատճեններն ու Պատվիրատուի գրավոր դիրքորոշումը:

Պատվիրատուն 28.04.2022թ.-ին ներկայացված գրությամբ ներկայացրել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված՝ «ԵՔՊԹ-ԳՀԾՁԲ-22/1» ծածկագրով գնման ընթացակարգի համապատասխան փաստաթղթերի պատճենները:

4. <u>ԳԲՔԱ-LO-2022/71 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. «Երևան քաղաքի պատմության թանգարան» ՀՈԱԿ-ի կողմից լուսանկարների և փաստաթղթերի թվայնացման և համակարգի ներդրման ծառայությունների ձեռքբերման նպատակով 01.04.2022թ.-ին հայտարարվել է «ԵՔՊԹ-ԳՀԾՁԲ-22/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

ii. Ընթացակարգի հայտերի բացման և հայտերի ներկայացման վերջնաժամկետ է սահմանվել 08.04.2022թ.-ին:

iii. Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ են ներկայացրել «Ջանիկ Սևոյան» Ա/Ձ-ն և «Բեստկոդ» ՍՊԸ-ն:

iv. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 08.04.2022թ.-ի նիստի թիվ 2 արձանագրության 3.2 կետի համաձայն՝ «Ջանիկ Սևոյան» Ա/Ձ-ն ներկայացված գնային առաջարկով, որպես մատուցվելիք ծառայությունների արժեք նշել է 5 290 000 ՀՀ դրամ, ԱԱՀ՝ 0, ընդհանուր գին՝ 5 290 000 ՀՀ դրամ, իսկ «Բեստկոդ» ՍՊԸ-ն որպես մատուցվելիք ծառայությունների արժեք նշել է 4 800 000 ՀՀ դրամ, ԱԱՀ՝ 960 000, ընդհանուր գին՝ 5 760 000 ՀՀ դրամ:

v. Հանձնաժողովի 12.04.2022թ.-ի նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ Հանձնաժողովը արձանագրել է, որ 11.04.2022թ.-ին «Ջանիկ Սևոյան» Ա/Ձ-ի կողմից ստացվել է գրություն առ այն, որ ընթացակարգին դիմած «Բեստկոդ» ՍՊԸ-ն, հայտերի բացման պահին, ՀՀ ՊԵԿ-ում հաշվառված է որպես գործունեությունը ժամանակավորապես դադարեցված, ինչպես նաև չկա որևէ նշում վերջինիս ԱԱՀ վճարող լինելու հանգամանքի մասին, այն դեպքում, երբ մասնակիցն ընթացակարգին մասնակցել է որպես ԱԱՀ վճարող:

vi. Նույն արձանագրության համաձայն՝ Հանձնաժողովը որոշել է կասեցնել հայտերի գնահատման նիստը և առաջարկել «Բեստկոդ» ՍՊԸ-ին ներկայացնել տեղեկատվություն /ապացույցներ/ ՀՀ ՊԵԿ-ում ընկերության ԱԱՀ վճարող լինելու հանգամանքի վերաբերյալ, ինչի իսկությունը պետք է հավաստված լինի ՀՀ ՊԵԿ-ի կողմից:

vii. Հանձնաժողովի 14.04.2022թ.-ի նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ «Բեստկոդ» ՍՊԸ-ի կողմից ներկայացվել է ՀՀ ՊԵԿ-ի կողմից տրամադրված տեղեկատվություն՝ ընկերության ԱԱՀ վճարող լինելու հանգամանքի վերաբերյալ:

viii. Նույն արձանագրության համաձայն՝ Հանձնաժողովը որոշել է ընթացակարգի արդյունքում ընտրված մասնակից ճանաչել «Բեստկոդ» ՍՊԸ-ին՝ որպես բավարար գնահատված նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից:

ix. www.gnumner.am համացանցային կայքում 14.04.2022թ.-ին հրապարակվել է պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարություն:

x. «Բեստկոդ» ՍՊԸ-ն 12.04.2022թ.-ին գրությամբ դիմել է ՀՀ պետական եկամուտների կոմիտե և խնդրել է տրամադրել տեղեկատվություն կազմակերպության կարգավիճակի վերաբերյալ և նշել, թե որ հարկման դաշտում է աշխատում:

xi. Ի պատասխան վերոնշյալ գրության, ՀՀ պետական եկամուտների կոմիտեն 13.04.2021թ.-ի թիվ 263-22 գրությամբ հայտնել է, որ ՀՀ ՊԵԿ տեղեկատվական բազայում առկա տվյալների համաձայն «Բեստկոդ» ՍՊԸ-ն (ՀՎՀՀ 09218057) ունի «գործող» կարգավիճակ 11.04.2022թ.-ից: Կազմակերպությունը 11.04.2022թ.-ից մինչև 31.12.2022թ.-ը ընդգրկված է ԱԱՀ վճարողների ցանկում:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցությանը, որ «Ջանիկ Սևոյան» Ա/Ձ-ի կողմից 19.04.2022թ.-ին ներկայացված բողոքն հիմնավոր է և ենթակա բավարարման, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 30-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մասնակիցը չի կարող նույն Ընթացակարգին ներկայացնել մեկից ավելի հայտ: Մասնակիցը հայտը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով: Հայտը ներառում է մասնակցի հաստատած՝

1) հրավերի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությունը.

2) գնային առաջարկը.

3) ոչ գնային առաջարկը (տեխնիկական առաջարկ կամ տեխնիկական բնութագիր), եթե հրավերով նախատեսված է.

4) հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ):

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ եթե մասնակիցը տվյալ գործարքի գծով պետական բյուջե պետք է վճարի ավելացված արժեքի հարկ, ապա գնային առաջարկում առանձին տողով նախատեսվում է այդ հարկատեսակի գծով վճարվելիք գումարի չափը: Ընդ որում, մասնակիցների գնային առաջարկների գնահատումն ու համեմատումն իրականացվում են առանց սույն մասում նշված հարկի գումարի հաշվարկման:

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 32-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով: Արժեքի բաղադրիչների հաշվարկ՝ բացվածք կամ այլ մանրամասներ չեն պահանջվում և ներկայացվում: Եթե մասնակիցը տվյալ գործարքի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե պետք է վճարի ավելացված արժեքի հարկ, ապա գնային առաջարկում առանձնացված տողով նախատեսվում է այդ հարկատեսակի գծով վճարվելիք գումարի չափը: Մասնակիցների գնային առաջարկների գնահատումն ու համեմատումն իրականացվում են առանց սույն ենթակետում նշված հարկի գումարի հաշվարկման:

Կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման և գնահատման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում է գնային առաջարկը, կամ եթե այն ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, բացառությամբ սույն կարգի 41-րդ կետով նախատեսված դեպքի: Գնումն էլեկտրոնային

համակարգով իրականացվելու դեպքում հիմք է ընդունվում համակարգում կցված՝ մասնակցի կողմից հաստատված գնային առաջարկը:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը: Եթե անհամապատասխանությունն արձանագրվել է ՀՀ պետական եկամուտների կոմիտեից ստացված տեղեկատվության հիման վրա, ապա մասնակցին ուղարկվող ծանուցմանը կցվում է նաև կոմիտեից ստացված տեղեկատվության բնօրինակից սկանավորված տարբերակը: Մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:

«Երևան քաղաքի պատմության թանգարան» ՀՈԱԿ-ի կողմից լուսանկարների և փաստաթղթերի թվայնացման և համակարգի ներդրման ծառայությունների ձեռքբերման նպատակով 01.04.2022թ.-ին հայտարարված «ԵՔՊԹ-ԳՀԾՁԲ-22/1» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի (այսուհետ նաև՝ Հրավեր) 8.8-րդ կետի համաձայն՝ Եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյուն¬քում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Հրավերի 8.9-րդ կետի համաձայն՝ եթե սույն հրավերի 8.8-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա վերջինիս հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

Վերոգրյալ իրավակարգավորումների լույսի ներքո՝ Բողոքներ քննող անձը փաստում է, որ մասնակիցը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով հայտ, որը ներառում է մասնակցի կողմից ներկայացված դիմում-հայտարարությունը, գնային առաջարկը, հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ): Ընդ որում, Կարգի 41-րդ կետը ուղղակիորեն սահմանում է արձանագրված անհամապատասխանությունը շտկելու անթույլատրելիություն հայտում ներառվող միայն գնային առաջարկի համար, այն էլ՝ որոշ բացառություններով: Սույն կետի իմաստից բխում է, որ մնացած բոլոր դեպքերում հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Հայտերի գնահատումն իրականացվում է հրավերով սահմանված կարգով և հրավերով նախատեսված պայմաններին չհամապատասխանող հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են, ներառյալ եթե մասնակիցը մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուն հաջորդող աշխատանքային օրվա Երևանի ժամանակով 17:00-ն գնահատող հանձնաժողովին չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում նշել, որ օրենսդիրն իմպերատիվ կերպով սահմանել է, որ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի երբ բացակայում է գնային առաջարկը կամ եթե վերջինս ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Սույն գործի փաստերի համաձայն՝ «Երևան քաղաքի պատմության թանգարան» ՀՈԱԿ-ի կողմից լուսանկարների և փաստաթղթերի թվայնացման և համակարգի ներդրման ծառայությունների ձեռքբերման նպատակով 01.04.2022թ.-ին հայտարարված «ԵՔՊԹ-ԳՀԾՁԲ-22/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հայտերի բացման և հայտերի ներկայացման վերջնաժամկետ է սահմանված եղել 08.04.2022թ.-ին, որին մասնակցելու նպատակով հայտ ներկայացրած «Ջանիկ Սևոյան» Ա/Ձ-ն՝ Հանձնաժողովի 08.04.2022թ.-ի նիստի թիվ 2 արձանագրության 3.2 կետի համաձայն ներկայացված գնային առաջարկով, որպես մատուցվելիք ծառայությունների արժեք նշել է 5 290 000 ՀՀ

դրամ, ԱԱՀ՝ 0, ընդհանուր գին՝ 5 290 000 ՀՀ դրամ, իսկ «Բեստկոդ» ՍՊԸ-ն որպես մատուցվելիք ծառայությունների արժեք նշել է 4 800 000 ՀՀ դրամ, ԱԱՀ՝ 960 000, ընդհանուր գին՝ 5 760 000 ՀՀ դրամ: Հանձնաժողովի 12.04.2022թ.-ի նիստի թիվ 3 արձանագրությամբ արձանագրել է, որ 11.04.2022թ.-ին «Ջանիկ Սևոյան» Ա/Ձ-ի կողմից ստացվել է գրություն առ այն, որ ընթացակարգին դիմած «Բեստկոդ» ՍՊԸ-ն, հայտերի բացման պահին, ՀՀ ՊԵԿ-ում հաշվառված է որպես գործունեությունը ժամանակավորապես դադարեցված, ինչպես նաև չկա որևէ նշում վերջինիս ԱԱՀ վճարող լինելու հանգամանքի մասին, այն դեպքում, երբ մասնակիցն ընթացակարգին մասնակցել է որպես ԱԱՀ վճարող, ինչով պայմանավորված որոշում է կայացվել կասեցնել հայտերի գնահատման նիստը և առաջարկել «Բեստկոդ» ՍՊԸ-ին ներկայացնել տեղեկատվություն /ապացույցներ/ ՀՀ ՊԵԿ-ում ընկերության ԱԱՀ վճարող լինելու հանգամանքի վերաբերյալ, ինչի իսկությունը պետք է հավաստված լինի ՀՀ ՊԵԿ-ի կողմից: Հանձնաժողովի 14.04.2022թ.-ի նիստի թիվ 4 արձանագրությամբ արձանագրվել է, որ «Բեստկոդ» ՍՊԸ-ի կողմից ներկայացվել է ՀՀ ՊԵԿ-ի կողմից տրամադրված տեղեկատվություն՝ ընկերության ԱԱՀ վճարող լինելու հանգամանքի վերաբերյալ, ինչով պայմանավորած որոշում է կայացվել ընթացակարգի արդյունքնում ընտրված մասնակից ճանաչել «Բեստկոդ» ՍՊԸ-ին՝ որպես բավարար գնահատված նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից: «Բեստկոդ» ՍՊԸ-ն 12.04.2022թ.-ին գրությամբ դիմել է ՀՀ պետական եկամուտների կոմիտե և խնդրել է տրամադրել տեղեկատվություն կազմակերպության կարգավիճակի վերաբերյալ և նշել, թե որ հարկման դաշտում է աշխատում, որին ի պատասխան ՀՀ պետական եկամուտների կոմիտեն 13.04.2021թ.-ի թիվ 263-22 գրությամբ հայտնել է, որ ՀՀ ՊԵԿ տեղեկատվական բազայում առկա տվյալների համաձայն «Բեստկոդ» ՍՊԸ-ն (ՀՎՀՀ 09218057) ունի «գործող» կարգավիճակ 11.04.2022թ.-ից: Կազմակերպությունը 11.04.2022թ.-ից մինչև 31.12.2022թ.-ը ընդգրկված է ԱԱՀ վճարողների ցանկում:

ՀՀ հարկային օրենսգրքի 59-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի համաձայն՝ եթե սույն հոդվածի 2-րդ, 2.1-ին և 3-րդ մասերով այլ բան սահմանված չէ, ապա ԱԱՀ վճարողներ են համարվում սույն հոդվածի 4-րդ մասի 1-ին կետին համապատասխան հարկային մարմնում որպես ԱԱՀ վճարող հաշվառված կազմակերպությունները, անհատ ձեռնարկատերերը և նոտարները՝ այն դեպքերում և ժամկետներում, երբ հայտարարությունում նշված օրվանից (բայց հայտարարությունը ներկայացնելու օրվան նախորդող 20-րդ օրվանից ոչ շուտ) մինչև հայտարարությունում նշված հարկային տարվա

ավարտը, հարկ վճարողը հարկային մարմին է ներկայացրել հայտարարություն՝ նշում կատարելով ԱԱՀ վճարող համարվելու և որպես ԱԱՀ վճարող հաշվառվելու մասին:

Նույն օրենսգրքի 255-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ շրջանառության հարկ վճարողը դադարում է (բացառությամբ Օրենսգրքի 254-րդ հոդվածի 6-րդ և 7-րդ մասերով սահմանված դեպքերի) այդպիսին համարվելուց, եթե հարկային մարմին է ներկայացրել հայտարարություն՝ նշում կատարելով ԱԱՀ վճարող համարվելու և որպես ԱԱՀ վճարող հաշվառվելու մասին՝ հայտարարությունում նշված օրվանից (բայց հայտարարությունը ներկայացնելու օրվան նախորդող 20-րդ օրվանից ոչ շուտ) մինչև հայտարարությունում նշված հարկային տարվա ավարտը:

Բողոքներ քննող անձը, գործում առկա փաստական հանգամանքները վերլուծության ենթարկելով վերը բերված իրավական նորմերի և դրանց հիման վրա արված մեկնաբանությունների համատեքստում, հանգում է այն հետևության, որ «Բեստկոդ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված գնային առաջարկը չի համապատասխանում վերոնշյալ իրավական նորմերի պահանջներին, քանի որ վերջինս՝ գնային առաջարկով տվյալ գործարքի գծով ՀՀ պետական բյուջե վճարվելիք ավելացված արժեքի հարկի գումարը նշելով՝ գործել է ոչ իրավաչափ, մասնավորապես՝ «Բեստկոդ» ՍՊԸ-ի կողմից գնային առաջարկը ներկայացվել է 08.04.2022թ.-ին, իսկ մասնակիցը ընդգրկվել է ԱԱՀ վճարողների ցանկում 11.04.2022թ.-ից սկսված:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում՝ Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ, տվյալ դեպքում, «Բեստկոդ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված գնային առաջարկում ԱԱՀ-ի տողը լրացված լինելը պետք է գնահատել որպես գնային առաջարկին վերագրվող անհամապատասխանություն, որպիսի պայմաններում «ԵՔՊԹ-ԳՀԾՁԲ-22/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից «Բեստկոդ» ՍՊԸ-ի հայտը բավարար գնահատելու և ընտրված մասնակից ճանաչելու մասին կայացված որոշումն ոչ իրավաչափ է և հակասում է Օրենքի 34-րդ հոդվածի և Կարգի 32-րդ կետի 2-րդ ենթակետի դրույթների տրամաբանությունից:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը,

Ո Ր Ո Շ Ե Ց

«Ջանիկ Սևոյան» Ա/Ձ-ի կողմից 19.04.2022թ.-ին ներկայացված ԳԲՔԱ-ԼՕ-2022/71 ծածկագրով բողոքը բավարարել:

1. Պարտավորեցնել «ԵՔՊԹ-ԳՀԾՁԲ-22/1» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովին՝

- դադարեցնել «Բեստկոդ» ՍՊԸ-ի հետ պայմանագիր կնքելու մասին կայացված որոշումը:

- ընդունել «Բեստկոդ» ՍՊԸ-ի հայտն անբավարար գնահատելու և մերժելու մասին որոշում:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**